

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2002 թվականի  
հոկտեմբերի 30-ին

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, հանրապետության պաշտպանության գործում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի (այսուհետ՝ զինված ուժեր) դերն ու խնդիրները, դրանց կառուցվածքը և ղեկավարումը, պաշտպանության բնագավառում օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունը:

### ԳԼՈՒԽ I

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

##### **Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանությունը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համակարգ է՝ ուղղված հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովմանը:

Պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության հիման վրա:

Պաշտպանության նպատակով ստեղծվում են զինված ուժեր և սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների զինապարտությունը:

Պաշտպանությանն առնչվող խնդիրներ լուծելու նպատակով, միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով) նախատեսված կարգով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կարող են տեղակայվել օտարերկրյա պետությունների զորամիավորումներ:

Ռազմական դրության ժամանակ պաշտպանության իրականացմանը կարող են ներգրավվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանապահ զորքերը, ներքին զորքերը, ազգային անվտանգության և արտակարգ իրավիճակների վարչությունների զինված ստորաբաժանումները (այսուհետ՝ այլ զորքեր):

Սույն հոդվածում նշված զորքերի թվարկումը սպառիչ է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում այլ զինվորական կազմավորումների ստեղծումն արգելվում է:

##### **Հոդված 2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը ներառում է՝

- ռազմական քաղաքականության մշակումը.
- ռազմական վտանգի կանխատեսումը և գնահատումը.
- պաշտպանության բնագավառի իրավական կարգավորումը.
- անհրաժեշտ կառուցվածքով և թվակազմով, ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով հագեցած, մարտական զորահավաքային բարձր պատրաստականություն ունեցող զինված ուժերի ստեղծումը, ինչպես նաև դրանց օգտագործման ծրագրավորումը.
- զորակոչի անցկացումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների պայմանագրային հիմունքներով զինծառայության ներգրավումը.
- կոլեկտիվ անվտանգության և համատեղ պաշտպանության նպատակներով միջազգային համագործակցությունը.

է) տնտեսության, պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, հաղորդակցության միջոցների ու հանգույցների, տարածքի և բնակչության զորահավաքային նախապատրաստումը.

ը) տարածքային և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ծրագրավորումն ու իրականացումը.

թ) ռազմաարդյունաբերական համալիրի և ռազմական գիտության զարգացումը՝ ներառյալ ռազմական ուսուցման կազմակերպումը.

ժ) պետական և ծառայողական գաղտնիքի պահպանման ապահովումը.

ժա) զինված ուժերի պահեստագորի, ռազմական ուսուցում անցած զինապարտների, ինչպես նաև անհրաժեշտ քանակությամբ զենքի և զինամթերքի, տեխնիկայի, պարենի և այլ նյութերի պաշարների նախապատրաստումը.

ժբ) պաշտպանության բնագավառի այլ միջոցառումներ:

### **Հոդված 3. Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը**

Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերից (համաձայնագրերից), սույն օրենքից և օրենսդրական այլ ակտերից:

## **Գ Լ ՈՒ Տ Ի Ի Ի**

### **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **Հոդված 4. Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի լիազորությունները**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը զինված ուժերի գլխավոր հրամանատարն է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝

ա) համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում.

բ) նշանակում և ազատում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը.

գ) շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ, պարգևատրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շքանշաններով և մեդալներով.

դ) վարում է բանակցություններ, կնքում և ստորագրում է պաշտպանության բնագավառի միջազգային պայմանագրեր (համաձայնագրեր), վավերացնում է միջկառավարական պայմանագրեր (համաձայնագրեր).

ե) հայտարարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների ժամկետային զինվորական ծառայության զորակոչ և սահմանված ժամկետը ծառայած անձանց զորացրում.

զ) որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին և տալիս է ռազմական գործողություններ վարելու՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի հրամաններ:

### **Հոդված 5. Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորությունները**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության իրականացումը.

բ) մշակում և հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները

գ) հաստատում է զինված ուժերի զարգացման, զորահավաքային նախապատրաստման, տեղակայման և ռազմավարական օգտագործման ծրագրերը.

դ) սահմանում է զինված ուժերի ընդհանուր թվաքանակը և կառուցվածքը.

ե) իր իրավասության շրջանակներում կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է պետական կառավարման մարմինների գործունեությունը զինված ուժերի սպառազինման, բնակավորման, ֆինանսավորման և թիկունքային ապահովման ոլորտներում:

զ) ապահովում է զինված ուժերի պահեստազորի նախապատրաստումը, կազմակերպում է զորահավաքային ծրագրերի, առաջադրանքների և պետական պահուստի կուտակման պլանների մշակումը:

է) ծրագրում և ապահովում է ռազմական արդյունաբերության և ռազմական գիտության զարգացումը:

ը) սահմանում է զինվորական կոչումների շնորհման կարգը և զորակոչի ենթակա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների թվաքանակը:

թ) սահմանում է պետական պաշտպանական պատվերի ձևավորման կարգը և իրականացնում վերահսկողություն՝ պաշտպանական ծախսերի նկատմամբ:

ժ) կազմակերպում է ընդհանուր և մասնակի զորահավաքների անցկացումը, հաստատում է զորահավաքային ռեզերվի և նյութական պաշարների կուտակման ծրագրերը, ղեկավարում է տնտեսության զորահավաքային (մոբիլիզացիոն) նախապատրաստությունը և դրա փոխադրումը ռազմական դրության իրավական հատուկ ռեժիմի:

ժա) իրականացնում է տարածքային և քաղաքացիական պաշտպանության ընդհանուր ծրագրումը, որոշում է դրանց կազմակերպման կարգը, խնդիրները, վերահսկում է հաստատված ծրագրերի կատարումը:

ժբ) մշակում է բնակչության հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության պետական ծրագրերը և ապահովում դրանց իրականացումը:

ժգ) ապահովում է զինծառայողների, նրանց հավասարեցված, ինչպես նաև նշված կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների օրենքով սահմանված կենսաթոշակային ապահովությունը և սոցիալական պաշտպանվածությունը:

ժդ) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է պաշտպանական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ռազմաուսումնական հաստատությունները:

ժե) պաշտպանության հարցերով օտարերկրյա պետությունների հետ վարում է բանակցություններ, կնքում է միջկառավարական պայմանագրեր (համաձայնագրեր), որոշում է ռազմական վտանգի նվազեցման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների վստահության ամրապնդման միջոցները:

ժզ) կազմակերպում է զենքի և ռազմական տեխնիկայի, ստրատեգիական նյութերի, առաջավոր տեխնոլոգիայի և երկակի նշանակության արտադրանքի արտահանման ու ներմուծման վերահսկողությունը:

ժէ) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

## **Հոդված 6. Պաշտպանության բնագավառում պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները, Ստեփանակերտի քաղաքապետը՝

ա) իրագործում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պաշտպանության բնագավառի տարածքային քաղաքականությունը:

բ) ապահովում են շրջաններում պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, զինված ուժերի զորահավաքային պատրաստությունը և զորակոչի իրականացումը, զինծառայողների, պահեստ արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամների սոցիալական, իրավական պաշտպանվածությունը:

գ) պաշտպանության նպատակով իրականացնում են տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումները, զորահավաքային ծրագրերի ու խնդիրների կատարումը:

դ) մասնակցում են տարածքային պաշտպանության միջոցառումների ծրագրավորմանն ու օժանդակում դրանց իրագործմանը:

ե) կազմակերպում և ղեկավարում են շրջանի բնակչության քաղաքացիական պաշտպանության աշխատանքները:

զ) օրենսդրությամբ սահմանված կարգով զինված ուժերն ապահովում են նյութական միջոցներով և կենսագործունեության համար անհրաժեշտ այլ արտադրանքով:

Պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ,  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՍԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Հոդված 7. Պաշտպանության բնագավառում ձեռնարկությունների, հիմնարկների,  
կազմակերպությունների գործառույթները և պաշտոնատար անձանց  
պարտականությունները**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձեռնարկությունները, հիմնարկները,  
կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք պետական պաշտպանական  
պատվերով սահմանված կարգով կատարում են ռազմական արտադրանքի թողարկման,  
վերանորոգման, մատակարարման հանձնարարություններ և ծառայություններ, իրականացնում  
են զորահավաքային նախապատրաստման ծրագրերով նախատեսված միջոցառումներ,  
անհրաժեշտ պայմաններ են ստեղծում իրենց աշխատողների զինվորական  
պարտականությունների կատարման համար, ինչպես նաև մասնակցում են  
քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրագործմանը՝ Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենսդրության համաձայն:

**Հոդված 8. Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
քաղաքացիների իրավաւունքներն ու պարտականությունները**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը յուրաքանչյուր  
քաղաքացու սահմանադրական պարտականությունն է:

Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներն  
ունեն պետության կողմից երաշխավորված իրավունքներ և կրում են պարտականություններ,  
որոնց իրագործումը կարգավորվում է սույն օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
օրենսդրական այլ ակտերով:

Օտարերկրյա պետությունների զինված ուժերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
քաղաքացիների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում օտարերկրյա  
պետությունների քաղաքացիների ծառայությունը կարգավորվում է միջազգային  
պայմանագրերով (համաձայնագրերով):

#### **ԳԼՈՒԽ IV**

#### **ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՁՈՐՔԵՐԸ**

**Հոդված 9. Պաշտպանության բնագավառում զինված ուժերի խնդիրները և  
կառուցվածքը**

Ձինված ուժերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության հիմքն են և  
ռազմավարական, մարտավարական խնդիրների զուգորդմամբ ապահովում են  
հանրապետության զինված պաշտպանությունը:

Ձինված ուժերը կոչված են զինված հարձակմանը դիմակայելու, Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու, ինչպես նաև Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) համաձայն  
խնդիրներ լուծելու համար:

Ձինված ուժերը ներառում են Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերի, զորախմբերի,  
զորամիավորումների, զինվորական կառավարման մարմինների, ձեռնարկությունների,  
հիմնարկների, կազմակերպությունների և ռազմաուսումնական հաստատությունների  
ամբողջական համակարգը:

**Հոդված 10. Ձինված ուժերի ղեկավարումը և կառավարումը**

Ձինված ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության Նախագահը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝  
իրենց լիազորությունների շրջանակներում:

Ջինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարը:

Ջինված ուժերի պետական կառավարման մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունն է, որն անմիջական պատասխանատվություն է կրում հանրապետության պաշտպանության ապահովման, զինված ուժերի ստեղծման, զարգացման և մարտական պատրաստականության համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

ա) իր լիազորությունների սահմաններում ուսուցնափրում և գնահատում է ռազմաքաղաքական իրադրությունը, ռազմական վտանգի և հանրապետության պաշտպանվածության աստիճանը.

բ) մասնակցում է հանրապետության ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակմանը.

գ) առաջարկություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն՝ զինված ուժերի կառուցվածքի, թվաքանակի և ապահովման վերաբերյալ.

դ) իրականացնում է միասնական ռազմատեխնիկական քաղաքականություն, համարվում է սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ գույքի գնման, արտադրության, գիտահետազոտական և նորոգման պետական պատվիրատուն (պետական պատվերը տեղադրող լիազորված մարմին).

ե) կազմակերպում և վերահսկում է զինված ուժերի ֆինանսական, տեխնիկական և թիկունքային ապահովվածությունը, անձնակազմի պատրաստվածությունը, կարգապահությունն ու մարտունակությունը.

զ) ղեկավարում է զինված ուժերի օպերատիվ ապահովումը, մարտական պատրաստությունը և անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակությունը.

է) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի կանոնագրքերով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության մյուս ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Ջինված ուժերի օպերատիվ կառավարման հիմնական մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբն է, որը՝

ա) մշակում է զինված ուժերի օգտագործման և զորահավաքային ծրագրերը.

բ) իրականացնում է զորքերի օպերատիվ կառավարումը.

գ) իրականացնում է զինված ուժերի զորահավաքային նախապատրաստումը և ծավալումը.

դ) մասնակցում է հանրապետության տնտեսության զորահավաքային նախապատրաստման ծրագրերի մշակմանը.

ե) կազմակերպում է շտաբների և զորքերի օպերատիվ նախապատրաստումը.

զ) իր լիազորությունների սահմաններում իրականացնում է

հանրապետության պաշտպանության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ այլ միջոցառումներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության խնդիրները, զործառույթները և լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի կանոնագրքերով և օրենսդրական այլ ակտերով:

## **Հոդված 11. Ջինված ուժերի տեղակայումը**

Ջինված ուժերի տեղակայումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Ջինված ուժերի տեղակայումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա:

## **Հոդված 12. Այլ զորքերը**

Այլ զորքերի ստեղծումը, կառավարումը և գործունեությունն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների հիման վրա:

Այլ զորքերը՝

ա) մասնակցում են զինված ուժերի օգտագործման ծրագրերի մշակմանը և իրենց մասով ապահովում դրանց իրականացումը.

բ) զինված ուժերի հետ մեկտեղ մասնակցում են հանրապետության վրա զինված հարձակմանը դիմակայելուն.

գ) պաշտպանության բնագավառում իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:  
Այլ զորքերի համալրումն իրականացվում է զինված ուժերի համար սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ V

### ՈՍՋՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ, ԶՈՐԱՀԱՎԱՔ

#### Հոդված 13. Ռազմական դրություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը հայտարարում է ռազմական դրություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կամ նրա մի մասում ռազմական դրությունը հայտարարվում է իրավական ռեժիմը սահմանվում է «Ռազմական դրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

#### Հոդված 14. Զորահավաք

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը ռազմական դրություն հայտարարելու հետ միաժամանակ կամ դրանից հետո կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

Զորահավաքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների գործունեության, զինված ուժերի (կամ առանձին ստորաբաժանումների) կազմակերպման և կազմի ռազմական դրության ռեժիմի անցման միջոցառումների համակարգ է:

Զորահավաքային նախապատրաստումն իրականացվում է խաղաղ ժամանակ և նպատակ ունի պետական կառավարման համակարգը, զինված ուժերը, տնտեսությունը, տարածքային կազմավորումները նախապատրաստել պետությունը զինված հարձակումից պաշտպանելու, պատերազմի ժամանակ տնտեսության և բնակչության պահանջմունքները բավարարելու համար:

Զորահավաքային նախապատրաստման և զորահավաքի անցկացման կարգը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

## ԳԼՈՒԽ VI

### ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 15. Զինված ուժերում և այլ զորքերում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ստեղծման և կանոնադրական գործունեության արգելումը

Զինված ուժերում և այլ զորքերում կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ստեղծումը և կանոնադրական գործունեությունն արգելվում է:

Զորամասերում, ռազմական ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ռազմաուսումնական հաստատությունների տարածքում կուսակցական քարոզչության կազմակերպումը և անցկացումն արգելվում է:

#### Հոդված 16. Զինված ուժերում և այլ զորքերում օրինականության ապահովումը

Զինված ուժերում և այլ զորքերում օրինականությունն ապահովվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, զինված ուժերի և այլ զորքերի համազորային կանոնագրքերով նախատեսված կարգով:

Զինված ուժերում և այլ զորքերում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Զինված ուժերում և այլ զորքերում քրեական գործերի դատաքննությունն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանները՝ օրենքով սահմանված կարգով:

#### Հոդված 17. Պատասխանատվությունը պաշտպանության բնագավառում Լեռնային

## Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար

Պաշտպանության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար մեղավոր անձինք կրում են պատասխանատվություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 18.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ԳԼՈՒԽ VII

#### ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

**Հոդված 19.** «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մասին»  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համապատասխանեցումը  
սույն օրենքին

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան փոփոխություններ կատարել  
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքում:

ԼԵՐՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

30 նոյեմբերի 2002թ.  
ք.Ստեփանակերտ  
ՀՕ-11